ՄԵԾ ՀԱՅՔԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՄԵԿ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՅԿԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր - Հռոմեական կայսրություն, Սասանյան տերություն, հեթանոսություն, հոգևոր համայնք, աշխարհաժողով, կաթողիկոս, ծրագիր:

Դեռևս Աքեմենյանների դինաստիայի տիրապետության տակ Ք.ա. VI-IV-րդ դարերում, Հայաստանում զգացվում էր պարսկականության ազդեցությունը: Հայաստանում այդ ազդեցությունը խորանում է Արշակունիների գահակալման ընթացքում: Մշակույթը, կենցաղը, վարք ու բարքը և նույնիսկ լեզուն մեծապես ազդվում են պարսկականից՝ ընդունելով բազմաթիվ բառեր, դարձվածքներ ու ասացվածքներ: Պարսկականությունը հանդիսանում էր թագավորական դինաստիայի քաղաքականությունը, որը աջակցվում էր դրսից՝ Արշակունյաց ավագ արքայական ճյուղի կողմից: Այդ ամենի արդյունքում Հայոց կրոնական պանթեոնը գրեթե կորցրել էր իր ինքնուրույնությունը[1]: Եթե պարթև Արշակունիների թագավորական դինաստիայի երկու ճյուղերի բարեկամական հարաբերությունների պարագայում մշակութային այդ կապը մեծ սպառնալիք չէր ներկայացնում, ապա իրադրությունը բոլորովին այլ էր Սասանյանների պարագայում: Սասանյանների քաղաքականության մեջ մեծ դերակատարում ուներ զրադաշտականությունը: Նրանց առաջին իսկ տիրակալ Արտաշիր Ա-ը Նագշ-ի Ռուստամի իր արձանագրությամբ հայտարարում է, որ իր իշխանության գալը կատարվել է ըստ Ահրումազդայի ծրագրի, որով էլ նա հիմնավորում է իր իշխանությունը «Իրանշահիրի», այսինքն՝ արիների թագավորության վրա[2]: Իրենց իշխանության սկզբում սասանյան տիրակալները հանդուրժողական էին մյուս կրոնների ու աստվածների պաշտամունքի նկատմամբ, սակայն զրադաշտականության դավանաբանական որոշ փոփոխություններից, հաստատության վերածվելուց, մոգերի հիերարխիայի ձևավորումից և պետական կրոն հռչակվելուց հետո[3]պարսկական տերությունում էլ ավելի աճեց մոգպետների հզորությունը, որոնց ներգործությամբ հալածանք սկսվեց այլ կրոնների և պաշտամունքների նկատմամբ ու փորձեր կատարվեց իրենց նվաճողական ծրագ-

---

[1] Տե՛ս **Գ. Գիւզալեան,** *Պատմական խնդիրներ,* էջ 52:

[2] Տե՛ս **E. W. Sauer,** *Sasanian Persia. Between Rome and the Steppes of Eurasia,* Edinburgh, 2017, p. 183.

[3] Տե՛ս **T. Daryaee,** *Sasanian Persia. The Rise and Fall of an Empire,* London, 2009, p. 69.

րերի ուղեծրում գտնվող երկրներում հաստատել վերափոխված զրահադաշտականությունը:

Ըստ երևույթին, Շապուհ Ա-ի՝ Հայաստանը գրավելուց հետո, պարսկական տիրապետության 27 տարիների ընթացքում փորձ է արվել վերացնելու հայկական աստվածների պաշտամունքի մնացած հետքերը և երկրի կրոնը ամբողջապես նույնացնելու պարսից զրադաշտականության հետ: Դրա մասին է վկայում Մովսես Խորենացու հիշատակությունը Շապուհ Ա-ի որդու՝ Հայաստանի թագավոր նշանակված Որմիզդ-Արտաշիրի գործողությունները. «Եւ զմեհենիցն պաշտամունս առաւել ևս յորդոր է. այլ և զհուրն որմզդական, որ ի վերայ բագնին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել: Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեացն յԱրմաւրայ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիր»[1]: Առաջին հայացքից թվում է, թե այդ քայլը ուղղված էր Արշակունիների նախնիների պաշտամունքի դեմ, սակայն ավելի խորը հայացք նետելով՝ կտեսնենք, որ ոչնչացվել էին այնպիսի աստվածություններ, որոնք գոյություն են ունեցել մինչև Արշակունիների Հայոց թագավորական գահին բազմելը[2]:

Հռոմեացիների օգնությամբ 287 թ. պարսկական տիրապետությունը Հայաստանում վերացրած և թագավորական գահ բարձացած Տրդատ Գ-ը նախ փորձում է Անահիտի պաշտամունքի միջոցով ժողովրդի առջև ծառացած պատմական նշանակության խնդիրներին լուծում տալ[3]: Սակայն, եթե Ք. ա. չորրորդ դարում Քսենոֆոնի հիշատակությամբ Մերձավոր Արևելքում ամենաշատը հայերն էին աչքի ընկնում Անահիտի պաշտամունքով, ապա Ք. հ. երրորդ դարի վերջում, որպես այդ պաշտամունքի ամենամեծ կենտրոն, կարելի է դիտարկել Պարսկաստանը: Նախ բավական է ասել այն, որ Պարսկաստանում գահ բարձրացած նոր դինաստիան Անահիտի քրմական ընտանիքից էր ելնում[4], սերտորեն կապված էր Անահիտի տաճարների հետ[5] և անգամ հանդես էր գալիս որպես Անահիտի տաճա-

---

[1] **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,* (քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս Յարութիւնեանի), Երևան, 1991, էջ 216:

[2] Կուռքերի տեղափոխությունները քաղաքից քաղաք հստակ ցույց է տալիս այն ժամանակշրջանները, երբ տեղի են ունեցել դեպքերը: Պաշտամունքային առարկաների Բագարանից Արտաշատ տեղափոխությունը տեղի է ունեցել Արտաշեսյանների օրոք, Արմավիրից Բագարան տեղափոխումը տեղի է ունեցել Երվանդ Դ-ի օրոք, իսկ Արմավիրում գոյություն ունեցած աստվածությունների պաշտամունքը գնում է հայ իրականության շատ ավելի հին ժամանակներ:

[3] Տե՛ս **Հրանտ Ք. Արմեն,** *Արշակունիք և լուսավորչականներ,* ՊԲՀ, թ. 1, Երևան, 1967, էջ 58:

[4] Տե՛ս **M. Brosius,** *The Persians,* London, 2006, p. 139.

[5] Տե՛ս **D. Kennet, P. Luft,** *Current Research in Sasanian Archeology, Art and History,* Oxford, 2008, p. 142.

րի խնամակալ[1]: Ուստի, Անահիտի պաշտամունքի միջոցով տվյալ ժամանակաշրջանում հնարավոր չէր կանխել հայ ժողովրդի համար առաջացած ձուլման վտանգը, և ինչպես Տրդատ Գ-ի մոտ տասնամյակ տևող փորձերը ցույց տվեցին, այն նաև ի վիճակի չէր կրոնական զարթոնք ապահովելու և ազգի միության ու դիմագծի պահպանման գործը ի կատար ածելու:

Բազմաստվածությունը տվյալ ժամանակի հայ իրականությունում ծառայում էր նախարարական առանձին տների ինքնավարության գաղափարական հիմնավորման համար, մինչդեռ տվյալ իրավիճակում ստեղծված խնդիրները հաղթահարելու համար անհրաժեշտ էր կենտրոնացված թագավորական իշխանության հզորացում[2]: Այդ խնդիրը հնարավոր էր լուծել քրիստոնեության միջոցով, որը կարող էր հիմնավորել կենտրոնացված թագավորական իշխանության գերակայությունը և նպաստել ազգի բոլոր խավերի միասնությանը, քանի որ Նոր Կտակարանում արդեն իսկ «նշմարվում է ապագա քրիստոնյա երկրների աստիճանական կառուցվածքը»[3]:Այդպիսով, 301 թ. Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն:Այն անհրաժեշտ էր թագավորական դինաստիայի պահպանման համար, ուստի, ամբողջ ժողովրդին քրիստոնյա դարձնելու գործին են լծվում պարթև Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Գ-ը[4]: Սակայն ժողովրդի վերից վար քրիստոնեացման ընթացքը այդքան էլ հարթ չի ընթացել: Գրիգոր Լուսավորչին հաջորդած Արիստակեսը նահատակվում է Ծոփքում հեթանոսական բարքերի դեմ պայքարելիս[5]: Արիստակեսին հաջորդած Վրթանեսի դեմ Աշտիշատում մոտ 2000 հազար հեթանոսներ մահափորձ են կազմակերպում,[6] սակայն դա նրանց չի հաջողվում: Վրթանեսի որդին ու նրան հաջորդած Հուսիկ կաթողիկոսը հենց արքունիքի ու թագավորի հեթանոսական բարքերի դեմ հանդիմանություն կատարելով՝ դիմում է չափազանց լուրջ քայլի.[7]նա արգելելում է Տիրան թագավորի մուտքը եկեղեցի, դրանով իսկ դիմում է էքսկոմունիկացիայի, որի դեպքում անձը զրկվում է եկեղեցու հաղորդակցությունից: Վաղ եկեղեցում անձը կարող էր էքսկոմունիկացիայի ենթարկվել, եթե կատարում էր քրիստոնեական կրոնին խիստ հակասող քայլեր և չէր զղջում դրա հա-

---

[1] Տե՛ս **T. Daryaee,** *Sasanian Persia. The Rise and Fall of an Empire,*p. 69.

[2] Տե՛ս **Կ. Միրումյան,** *Հայ քաղաքական մտքի պատմությունից,* Երևան, 2002, էջ 39:

[3] **Հ. Հակոբյան,** *Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության Նոր Կտակարանյան մոտեցումները,* Էջմիածին ամսագիր, թ. 5, Էջմիածին, 2019, էջ 138:

[4] Տե՛ս **Գ Գիւզալեան,** *Հայաստանի պատմութեան շրջանները,* Պէյրութ, 1946, էջ 92:

[5] Տե՛ս **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,* էջ 243-244:

[6] Տե՛ս **Բ. Հարությունյան,** *Հայոց արքունիքի դերը Հայոց եկեղեցու անկախացման գործում,* Հայոց եկեղեցի և պետություն միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2000,էջ 29:

[7] Տե՛ս *Չորրորդ դարու Հայ եկեղեցին,* Թիֆլիս, 1901, էջ 28:

մար[1]: Սակայն թագավորի ու ժողովրդի հավատացյալ բազմության միջև բաժանման առկայությունը հղի էր բացասական հետևանքներով: Հուսիկ կաթողիկոսը այդ դեպքի պատճառով բրածեծ է արվում և մահանում[2]: Հուսիկին հաջորդած Դանիել Ասորին հեթանոսական բարքերի նույնպիսի ընդդիմությամբ ևս կանգնում է մահապատժի վտանգի առջև, իսկ նրան հաջորդած Փառենի և Շահակի ժամանակ հեթանոսությունը Հայաստանում նորից գլուխ է բարձրացնում և ոչ միայն ղեկավար դասը, այլև հասարակ մարդիկ «ամբարշտեալք, ի հնութիւն առաջին գործոցն հարցն իւրեանց դարձեալք, ի փոքրանց մինչև ցմեծամեծս»[3]: Նույնի մասին հաղորդում է նաև Մեսրոպ Վայոցձորեցին. «Իսկ յաշխարհս Հայոց ի մահուանէն Յուսկանն մինչեւ ի մեծն Ներսէս խոտորեալ էին ի ճանապարհացն Աստուծոյ»[4]: Եթե Մովսես Խորենացու վկայությամբ Գողթն գավառում, որը մայրաքաղաքից մոտ 35 կմ հեռավորության վրա էր գտնվում, քրիստոնեության պետական կրոն հռչակումից անգամ 100 տարի անց իրեն զգացնել էր տալիս հեթանոսությունը, ապա երկրի ծայրամասերում ավելի մեծ չափով պետք է զգացվեր հեթանոսական տարրը: Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ հայ նախարարների մի մասը հակված էին դեպի Պարսկաստանը և հանդուրժողական վերաբերմունք ունեին հեթանոսության նկատմամբ: Քանի որ Պարսկաստանը հովանավորում էր զրադաշտականության հետ առնչվող հեթանոս աստվածությունների պաշտամունքը, բացի այդ, հեթանոսությունը նաև նպաստում էր ավատական տարանջատվածությանը, ինչը համապատասխանում էր նախարարների մեծ մասի քաղաքական նկրտումներին[5]: Սկզբունքորեն, քրիստոնեությունը ավելի նպաստավոր էր կենտրոնական թագավորական իշխանության համար, սակայն Տիրան թագավորը հաշվի առնելով հեթանոսական լայն զանգվածների առկայությունը և նրանց հովանավորմանը պատրաստ պարսից տիրակալին, կտրուկ քայլեր չձեռնարկեց հեթանոսության դեմ, որպեսզի այդ զանգվածները չանցնեին Շապուհ Բ-ի կողմը: Որովհետև վտանգ կար, որ հեթանոսները կարող էին նախընտրել հեթանոս պարսից արքային, որը կարող էր մեծամեծ խոստումներ տալ, քան թե քրիստոնյա արքային, որը նեղություն կպատճառեր իրենց:

---

[1] Տե՛ս **J. L. Papandrea,** *Reading the Early Church Fathers. From the Didache to Nicaea,* New York, 1993, p. 58.

[2] **Փաւստոս Բիւզանդ,** *Պատմութիւն Հայոց,* (բնագիրը Ք. Պատկանյանի, ծանոթագրությունները Ս. Մալխասյանի), Երևան, 1987, էջ 52:

[3] Նույն տեղում, էջ 72:

[4] **Մեսրոպ Վայոցձորեցի,** *Յաղագս զարմից Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի եւ պատմութիւն Սրբոյն Ներսէսի Հայոց Հայրապետի,* Վանաձոր, 2015, էջ 20:

[5] Տե՛ս **Վ, Մ. Վարդանյան,** *Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչմերուկներում,* Վաղարշապատ, 2005, էջ 89:

Հեթանոսության վերազարթոնքը և հաղթանակը քրիստոնեության նկատմամբ ստեղծված պատմական պայմաններում կարող էր ծանր հետևանքներ ունենալ Մեծ Հայքի թագավորության համար. արդյունքում կտապալվեր այն գործը, որ սկսել էին Տրդատ Գ-ը և Գրիգոր Լուսավորիչը: Այդ ամենը քաջ գիտակցելով՝ Արշակ Բ-ը, հայ նախարարները և հոգևոր դասը միակամորեն գահ են բարձրացնում ժամանակի կարող ուժերից մեկին՝ Լուսավորչի զարմից և թագավորի ազգական, սենեկապետ Ներսեսին: Արշակ Բ-ի գահակալության առաջին տարիները խաղաղ էին անցնում,քանի որ 350 թ. սկսած շուրջ 8 տարի Շապուհ Բ-ը դադարեցրել էր հարձակումները հռոմեացիների վրա և իր ռազմական ուժերը կենտրոնացրել էր պարսից տերության արևելյան սահմանում՝ խիոնների, քուշանների և այլ քոչվոր ցեղերի առաջացրած վտանգին դիմագրավելու համար[1]: Դա չափազանց հարմար առիթ էր հայ ժողովրդին քրիստոնյա դարձնելու գործը ավարտին հասցնելու, թագավորական կենտրոնական իշխանությունը ամրապնդելու և երկիրը հզորացնելու համար:

Ինչպես արդեն նշել էինք, նման ծրագրի հաջողված օրինակ էր հանդիսանում Սասանյանների փորձը: Այն բաղկացած էր հետևյալ քայլերից՝ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների սերտ փոխհարաբերակցության ձևավորում, կրոնական զարթոնք, կենտրոնամետ պետական գաղափարախոսության հաստատում, հզոր բյուրոկրատական համակարգի ստեղծում, քաղաքների հիմնադրում,թագավորի ուղիղ ենթակայության տակ եղող ռազմական ուժի ավելացում և այդ քայլերից հետո ազնվական ընտանիքների դերի սահմանափակում և թագավորական իշխանության հզորացում: Ուստի, Արշակ Բ-ի մեծ ծրագրերի մի կարևոր մասն էլ կապված էր իր ազգական Ներսես Մեծի հետ, որը հզոր պետության ստեղծելու հեռանկարի իր բաժինը կյանքի կոչելու համար առաջադրում է իր ծրագիրը: Ըստ Ներսես Մեծի ծրագրի, ամբողջ հայ ժողովուրդը պետք է վերածվեր մի մեծ քրիստոնեական հոգևոր համայնքի. «Զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն»[2]. այդ ծրագիրը հավանության է արժանանում Արշակ Բ-ի կողմից և թագավորը անձամբ աջակցում այն կյանքի կոչելու համար: Արշակ Բ-ի կողմից Ներսեսի ծրագրի համար տրամադրվող հսկայական միջոցները անշուշտ նաև նպատակ ունեին հասարակ ժողովրդի և հասարակության ստորին խավի վիճակի բարելավմամբ՝ նվաճել

[1] Տե՛ս **G. Gyimah,** *The Impact of the Eastern Frontier on Sasanian Relations with the Romans. How Problems in the Northeast and East informed Sasanian relations with the Romans.* https://www.researchgate.net, 2018, 20:28.20.10,2019, p. 2, **Հ Մանանդյան,** *Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության,* հատոր Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 258:

[2] **Փաւստոս Բիւզանդ,** *Պատմութիւն Հայոց,* էջ 118:

ժողովրդի սերն ու հավատարմությունը, որը կամրապնդեր հայոց արքայի դիրքը ներքին և արտաքին քաղաքական ասպարեզում:

Ներսես Մեծը երկար տարիներ ապրել էր Կապադովկիայի Կեսարիա քաղաքում և կրթություն ստացել այնտեղ[1], եղել էր Արևելյան Հռոմեական կայսրությունում[2], ուստի, տեղյակ էր, թե ինչպես է քրիստոնեությունը բուռն կերպով տարածվել Հռոմեական կայսրությունում, ծանոթ էր քրիստոնեական համայնքների կառուցվածքին ու գործունեությանը. «-Քանզի զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին, ի սմա նկարագրէ»[3]: Վաղ քրիստոնեական եկեղեցում հավատացյալների համայնքները մեծ ընտանիքներ էին հիշեցնում, և դրանցում եղող ամեն ոք աջակցության ու հատուկ վերաբերմունքի էր արժանանում համայնքի կողմից: Քրիստոնեական համայնքի հավատացյալների համար գործում էր հավասարություն: Համայնքը հոգ էր տանում աղքատներին, հիվանդներին, այրիներին, որբերին և կարիքի մեջ հայտնված համայնքի անդամներին[4]: Այցելում էին բանտում հայտնված կամ հանքերում ծանր աշխատանք կատարող համայնքի անդամներին և սովի, համաճարակի, երկրաշարժի կամ այլ աղետի դեպքում օգնություն կազմակերպում նաև այլ համայնքներին[5]: Օթևան էին տրամադրում օտարականներին, ուխտավորներին և ճամփորդներին, որոնք հայտնում էին իրենց քրիստոնյա լինելու մասին: Այդ պարտականությունը հիմնականում կատարվում էր սարկավագի կողմից՝ եպիսկոպոսի հանձնարարությամբ և հովանավորությամբ[6]: Այդ հանգամանքը մեծապես նպաստել էր քրիստոնեության տարածմանը և արմատավորմանը Հռոմեական կայսրությունում:

Ներսես Մեծը իր ծրագրի իրագործման համար այդ նույն միջոցները փորձեց գործադրել նաև Մեծ Հայքի թագավորությունում, բայց ավելի մեծ մասշտաբով և պետական մակարդակով: Սակայն Մեծ Հայքում և Հռոմեական կայսրությունում իրավիճակի մի վճռորոշ տարբերություն կար, որը մեծապես ազդեց կաթողիկոսի ծրագրի հետագա ընթացքի վրա: Առաջին դարից հետո Մեծ Հայքում քրիստոնեությունը լայն տարածում չէր գտել: Իսկ 301 թ. քրիստոնեական միտքը արդեն իսկ ամբողջությամբ այնպիսին չէր, ինչպես առաջին դարում: Քրստոնեությունը առաքելական շրջանից անցել էր ջատագովական ժամանակաշրջան, երբ շեշտվում էր,

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 108:

[2] Տե՛ս **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,* էջ 279:

[3] Նույն տեղում էջ 279:

[4] Տե՛ս **A. E. McGrath,** *Christian History. An Introduction,* New Jersey, 2013, p. 9, **C. S. Campbell, B. A. Lustig,** *Theology and Medicine. DutiestoOthers,* Oregon, 1994, p. 248.

[5] Տե՛ս **А. Дворкин,** *Очерки по истории Вселенской Православной церкви,* Москва, 2008, с. 120.

[6] Տե՛ս **A. B. Wheatley,** *Patronage in Early Christianity. Its Use and Transformation from Jesus to Paul of Samosata,* Oregon, 2011, p. 124.

որ քրիստոնեությունը կենսունակ է պետական կրոն դառնալու համար և չի հակասում ո՛չ աշխարհիկ ղեկավարին, և ո՛չ էլ պետությանը, այլ ընդհակառակը, քարոզում է հավատարիմ և օրինապահ հասարակություն, իսկ քրիստոնյաները «կատարյալ քաղաքացիներ»[1] են և նրանց բարոյականությունը դաստիարակում է առաքինի սերունդ պետության համար[2]: Այդ մոտեցումը չորրորդ դարի սկզբում, նոր կրոնի լայնորեն տարածման ժամանակ, շեշտադրվեց պետության կողմից, ուստի հայ ժողովրդի լայն զանգվածների համար քրիստոնեությունը կարող էր դիտարկվել որպես կրոն, որը ծառայում է թագավորին և իշխանությանը, մինչդեռ Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը առաջին հերթին կրոն էր ժողովրդի համար: Քրիստոնեության տարածման օրինակով էլ Մեծ Հայքում վերևից ներքև կազմակերպվեց քրիստոնեական համայնքները:

Ներսես Մեծը, բացի Հռոմեական կայսրության ներսում քրիստոնեական քաղաքակրթության ձևավորման փորձից, տեղյակ էր նաև ազգը կրոնի միջոցով միավորելու և ընդհանուր ազգային գաղափարախոսության մշակման ու դրա միջոցով կենսական նշանակության խնդիրների լուծման շատ ավելի հին օրինակի: Հին Կտակարանի Ելից գրքում նկարագրվում է, թե ինչպես է Մովսես մարգարեն Սինայի անապատում հայտնված 12 ցեղերի մարդկանց համախմբում կրոնի միջոցով, ձևավորում ազգային ու գաղափարական միասնականություն և հաղթահարում դժվարին իրավիճակում հայտնված ժողովրդի առջև ծառացած խնդիրները: Մովսեսի կողմից հաստատվում է Ահարոնյան քահանայական դասը և սահմանվում են օրենքներ,որով կարգավորվում են ներազգային հարաբերությունները: Արդյունքում,թշնամաբար տրամադրված երկրներով շրջապատված ժողովրդի համար հնարավոր է դառնում լուծել ազգի գոյապահպանման ու բնականոն զարգացման համար սեփական տարածքի ձեռքբերման ու իրենց առաջ դրված պատմական նշանակության խնդիրները:

Կեսարիայում ձեռնադրությունից վերադառնալուց հետո Ներսես Մեծը հայ ժողովրդին մեկ հոգևոր մեծ համայնքի վերածելու իր ծրագիրը կյանքի կոչելու համար սկսում է ակտիվ քարոզչական գործունեություն ծավալել: Նա վերակառուցում է ավերված եկեղեցիները և վերականգնում է քրիստոնեական պաշտամունքը շատ տեղերում: Փավստոս Բուզանդը կրոնական այլաբանությամբ ներկայացնում է, որ Ներսես Ա-ը Գրիգոր Լուսավորչի և քրիստոնեական վաղ շրջանի մեծագույն դեմքերի նման հզոր քարոզիչ էր և կարողանում էր քրիստոնեությունից հետ կանգնածնե-

[1] **Ե. Ծ. Վրդ. Պետրոսյան,** *Հայրաբանություն,* Ա Մաս, Էջմիածին, 1996, էջ 59:

[2] Տե՛ս **Ի. Մեյենդորֆ,** *Ներածություն հայրախոսական աստվածաբանության,* Էջմիածին, 2013, էջ 63:

րին և հեթանոսներից շատերին դարձի բերել[1]: Այդ քարոզչության ընթացքում Ներսես Ա-ը մանրամասնորեն ծանոթանում է իրավիճակին և բացերին[2], որոնց լրացմանն է նվիրում իր հետագա գործունեությունը: 301 թ. քրիստոնեության տարածման ջանքերը և դրան հաջորդող մոտ կես դար ժամանակահատվածը ապացուցել էին, որ բռնությամբ, ինչը հակասում էր քրիստոնեության էությանը, հնարավոր չէ արմատախիլ անել հին կրոնը, ուստի Ներսես Մեծը որոշեց իրականացնել մարդասիրական բարեփոխումներ, որոնք երկրի բնակչության լայն զանգվածներին գործնականորեն ապացուցում էին քրիստոնեության առավելությունը:

Լավ ուսումնասիրելով Մեծ Հայքում քրիստոնեական եկեղեցու իրական վիճակը՝ Ներսես Ա-ը հասկանում է, որ առկա ուժերով հնարավոր չէ հասնել սպասված արդյունքին և որոշում է մեծացնել հոգևորականների թիվը և իր առջև դրված խնդրի լուծման համար գործադրել վերոհիշյալ փորձը Մեծ Հայքում: Այդ նպատակով Արշակ Բ-ի համաձայնությամբ 354 թ. Աշտիշատում[3] հրավիրում է աշխարհաժողով: Ընդհանրապես, աշխարհաժողովները հրավիրվում էին երկրի համար կարևոր խնդիրների քննարկման համար և այն նախագահվում էր թագավորի կողմից[4], բայց Աշտիշատի ժողովը հրավիրում և նախագահում էր Ներսես Ա-ը[5]: Հին Կտակարանի վերոհիշյալ օրինակի նմանողությամբ Աշտիշատում հաստատում են ներազգային կյանքի շատ ոլորտներ կարգավորող օրենքներ: Հաստատվում են վանական միաբանություններ և դրանց կից դպրոցներ: Դպրոցներում պետք է ուսանեին վանականները և ազգի շատ զավակներ: Մեծ Հայքում հասանելի քրիստոնեական գրականությունը այդ ժամանակ հունարենով և ասորերենով էր, ուստի այդ դպրոցներում պետք է ուսուցանվեին այդ երկու լեզուները, որոնց միջոցով աշակերտների մեջ կսերմանվեին քրիստոնեական գաղափարները և նրանցից շատերը ժողովրդի

---

[1] Տե՛ս **Փաւստոս Բիւզանդ,** *Պատմութիւն Հայոց,* էջ 116:

[2] Տե՛ս **Ղ. Վ, Յովնանեան,** *Մեծն Ներսէս եւ Հայաստանի վրայ ունեցած ազդեցութիւնը,* Վիէնա, 1851, էջն16-17:

[3] Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի, Տարոն գավառի Աշտիշատ ավանը պատկանում էր Լուսավորչի տոհմին, դրա անունը բացատրվում է իբրև «շատ զոհերի և պաշտամանց տեղ» (**Ղ. Ինճիճեան,** *Ստորագրութիւն հին Հայաստանեայց,* Վենետիկ, 1882, էջ 92): Հին ժամանակներից սկսած այն համարվում էր համազգային սրբատեղի: Նախաքրիստոնեական շրջանում այստեղ են գտնվել Վահագնի, Աստղիկի և Անահիտի մեհյանները: Աշտիշատում են անցկացվել Աստղիկին նվիրված Վարդավառի և Վահագնին նվիրված մարմնամարզական խաղերը և ամենամյա տոնակատարությունները: Մեծ Հայքի հենց այդ վայրում էր մեհյանների տեղում կառուցվել առաջին եկեղեցին, որը նաև նախնիների ժողովատեղին էր համարվում:

[4] Տե՛ս **Հ. Մանանդյան,** *Ֆեոդալիզմը Հին Հայաստանում,* էջ 59, **Ա. Մովսիսյան,** *Աշխարհաժողով. Հին Հայաստանի բարձրագույն խորհրդակցական ժողովը երկրի դասային համերաշխության երաշխավոր,* 21-րդ Դար, թիվ 3, Երևան, 2016, էջ 165:

[5] Տե՛ս **Փաւստոս Բիւզանդ,** *Պատմութիւն Հայոց,* էջ 118, *Ներսէս Մեծ,* Թիֆլիս, 1885, էջ 5:

համար բանավոր կթարգմանեին Աստվածաշունչը և այլ հոգևոր գրականություն, որոշներն էլ կդառնային քարոզիչներ: Հռոմեական Կայսրության քրիստոնեական համայնքների կատարած գործառույթներին համապատասխան՝ ժողովում որոշվում է հիմնադրել հաստատություններ: Հաստատվում են հիվանդանոցներ՝ հաշմանդամների, վիրավորվածների ու ծանր հիվանդների համար, ուրկանոցներ՝ բորոտների, ընկնավորների ու ըստ երևույթին նաև ժանտախտով տառապողների համար, որովհետև այդ շրջանում Արշակավանի և Արտագերսի պարագայում հիշատակվում է ժանտախտի համաճարակի դեպքեր, ինչը հուշում է այդ ժամանակ տվյալ հիվանդության սպառնալիքի մասին, որի տարածումը չափազանց վտանգավոր կարող էր լինել ազգաբնակչության համար: Հիմնադրվում են աղքատանոցներ, որոնք երկրից մուրացկանությունը վերացնելու համար հոգ էին տանում ծայրահեղ աղքատացածներին, ինչպես նաև որբերին և այրիներին: Կառուցվում են նաև իջևանատներ, որտեղ կարող էին հանգրվնել ճանապարհորդները, ուխտավորները և առևտրականները:

Կարևոր էր նաև թագավորին, նախարարներին և առհասարակ ուրիշների վրա իշխանություն ունեցողներին ուղղված հրահանգը, որպեսզի իրենց ենթակաների նկատմամբ չիրականացնեն չարդարացված խստություններ ու հարկային չարաշահումներ, այլ «սիրել իբրև զընտանիս»[1]: Իսկ իշխանության ենթակա անձանց պատվիրում էր հնազանդ և հավատարիմ մնալ իրենց տերերին: Հավանական է, որ Աշտիշատի ժողովում Ներսես Մեծը վերահաստատել է Հայոց արքունիքում նախարարների զբաղեցրած գահերը[2]: Պետական գաղափարի ամրապնդմանն էր ուղղված նաև վանքերում թագավորների, իշխանների ու զորավարների շիրիմների կարգի բերման և առանձնակի պատվով վերաբերվելու հրահանգը[3]: Ժողովում եկեղեցու դատական գործառույթին առնչվող որոշումներ են կայացվում, որոնցից էին սպանության, վրեժխնդրության, հափշտակության, սուտ վկայություն մասին օրենքները: Որոշումներ են կայացվում նաև ամուսնաբնտանեկան հարաբերությունների կարգավորման վերաբերյալ, արգելվում է մերձավորների ամուսնությունը, որի վերացմամբ ավելի առողջ սերունդ կունենար երկիրը, արգելվում է հանգուցյալի վրա ոճիրներ գործելու հեթանոսական սովորությունը, սեռական սանձարձակությունը, մոլի հարբեցողությունը և դրանց հետ մեկտեղ ընդունվում են նաև հոգևոր ոլորտի որոշ կանոններ: Աշտիշատի ժողովի բոլոր որոշում-

[1] **Փաւստոս Բիւզանդ,** *Պատմութիւն Հայոց,* էջ 120:

[2] Տե՛ս **Մեսրոպ Վայոցձորեցի,** *Յաղագս զարմից Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի եւ պատմութիւն Սրբոյն Ներսէսի Հայոց Հայրապետի,* էջ 34:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 44:

ները հանդիսանում էին զուտ այն տարրերը որոնց ամբողջական համակարգով ընթացող հասարակությունը պետք է վերածվեր կայուն, միասնական հոգևոր համայնքի:

Ժողովի որոշումների իրագործման աշխատանքները սկսում են ծավալվել Մեծ Հայքի բոլոր կողմերում՝ թե՛ մեծ և թե՛ փոքր բնակավայրերում, ինչը պայմանավորված էր հայոց հայրապետի կենտրոնացված իշխանությամբ և Արշակ Բ-ի հովանավորությամբ: Հայոց եկեղեցին կալվածքներ և հոգևոր հաստատություններ ուներ երկրի բոլոր նահանգներում և կաթողիկոսին անվերապահորեն ենթարկվում էին բոլոր թեմերի հոգևոր առաջնորդները և սպասավորները: Այդ հսկայական նախաձեռնությունները պահանջում էին մեծ չափով նյութական ռեսուրսներ, ինչի համար ծրագրի իրագործմանը հանձնվեցին ավաններ, ագարակներ և պատկառելի գումար՝ պետական գանձարանից:

Ըստ երևույթին, Ներսես Մեծի ծրագրի համաձայն, Մեծ Հայքը դառնալու էր կիսաթեոկրատիկ թագավորություն: Երկրի թեոկրատիկ լինել կամ չլինելը քննվում է հետևյալ չափանիշներով՝ ա) քաղաքական և կրոնական իշխանության կենտրոնացումը մեկ անձի ձեռքում բ) կրոնական կանոնի հարկադրումը ողջ իրավական համակարգի վրա գ) պետական կառավարումը հոգևոր պաշտոնյաների կողմից դ) կրթության ղեկավարումը կրոնական նվիրապետության կողմից[1]: Ներսես Մեծի ծրագրի մշակման ու գործադրման տարիները ցույց տվեցին, որ կրոնական ու քաղաքական իշխանությունները մնում էին անջատ՝ կաթողիկոսի և թագավորի ձեռքում: Պետական կառավարումը իրականացվում էր ոչ թե կրոնական պաշտոնյաների միջոցով, այլ թագավորի գլխավորությամբ նշանակված հատուկ գործակալությունների միջոցով: Միևնույն ժամանակ, այդ տարիների ընթացքում, տեսնում ենք նաև կրոնական կանոնի դերը օրենսդրական գործում, իսկ կաթողիկոսին՝ որպես մեծ դատավոր: Կրթությունը նույպես ղեկավարվում էր եկեղեցական նվիրապետության կողմից: Ուստի, այդ ամենը վկայում է, որ ծրագիրը ենթադրում էր երկրի կիսաթեոկրատիկ կառավարման համակարգ:

Սակայն Ներսես Մեծի ծրագիրը ուներ նաև լուրջ ընդիմադիրներ և բախվեց ներքին ու արտաքին, ծրագրի համար անբարենպաստ, քաղաքական դրսևորումների: Ծրագրի առաջնային ընդիմադիրներից էր Հայր մարդպետը:: Մարդպետն էր կատարում արքայի կանանոցի ու արքունիքի վերակացությունը: Նրա հսկողության տակ էր գտնվում թագավորին

[1] Տե՛ս **A. Philippidis,** *Was the Byzantine State a Theocracy,* https://www.impantokratoros.gr, 15: 14, 26.10.2019.

պատկանող բերդերը, գանձերը և կալվածքները[1] և այդ ժամանակ մարդպետը բավականին բարձր դիրք էր զբաղեցնում երկրում: Մարդպետը աշխատում էր թագավորական իշխանության հզորացման համար և դեմ էր կենտրոնախույս ուժերին ու ձգտում էր նաև ընդարձակել արքունի տարածքները: Հայ նախարարներից ոմանք արդեն իսկ զոհ էին գնացել մարդպետի կենտրոնամետ քաղաքական ջանքերի ընթացքին: Մարդպետը վտանգ էր տեսնում նաև եկեղեցու հզորացման մեջ, ուստի նրա քայլերը հասան մինչև իսկ եկեղեցուն տարածքներից զրկելու սպառնալիքի: Սակայն, մարդպետի այդ սպառնալիքը տխուր վախճանի հանգեցրեց իրեն:

Անշուշտ, Ներսես մեծի ծրագրին դեմ էին նաև կենտրոնախույս նախարարները, որոնք դեմ էին երկրի կենտրոնացված իշխանության հզորացմանը: Ծրագին դեմ էին մանավանդ այն նախարարները, որոնք հակված էին Արևելահռոմեական կայսրության կամ Պարսկական տերության կողմը: Ծրագրի իրագործման համար հատկապես վտանգավոր էին պարսկամետ նախարարները, որովհետև Սասանյանները դեմ էին ոչ միայն ծրագրի հետևանքին՝ Մեծ Հայքում կենտրոնական իշխանության հզորացմանը, այլև պատճառին՝ քրիստոնեության ամրապնդմանը երկրում: Թվարկված ներքին պատճառներից ավելի շատ բացասական կերպով ծրագրի իրագործման վրա ազդեց Ներսես Ա-ի և Արշակ Բ-ի հարաբերությունների սրումը՝ Արշակավան քաղաքի կառուցման և թագավորի եղբորորդի Գնելի սպանությունը, որից հետո Ներսեսը Մեծը հրաժարվում է կաթողիկոսությունից:

Ծրագրի վրա ազդեց նաև այն, որ Շապուհ Ա-ն իր տերության արևելյան սահմաններում մղած երկար պատերազմներից հետո հասավ հաջողության, հաշտություն կնքեց քոչվոր ցեղերի հետ և ձեռք բերեց նրանց համագործակցությունը: Դրանից հետո 359 թ. կրկին վերսկսվեցին պարսկահռոմեական պատերազմները, որոնք դադարեցին 363 թ. Հովիանոս կայսրի կնքած «ամոթալի» կոչված հաշտության պայմանագրով, որով հռոմեացիները հրաժարվում էին օգնություն ցուցաբերել իրենց դաշնակից Մեծ Հայքին[2]: Դրանից հետո Շապուհ Բ-ը պատերազմ է սկսում Մեծ Հայքի դեմ և, չնայած սկզբնական շրջանի հայերի մղած հաջող պայքարին, ի վերջո դավադրությունների միջոցով Շապուհին հաջողվում է ձերբակալել Արշակ Բ-ին, գրավել Մեծ Հայքը, ավերել մեծ քաղաքները և գերի տանել բազմահազար մարդկանց:

---

[1] Տե՛ս **Հ. Մանանդյան,** *Ֆեոդալիզմը Հին Հայաստանում. Արշակունիների ու մարզպանության շրջան,* էջ 64:

[2] Տե՛ս **G. Greatrex, S. Lieu,** *Roman Eastern Frontier and the Persian Wars AD 363-628,* London, 2002, p. 1.

Այդ ծանր պայմաններում գահ է բարձրանում Պապ թագավորը և վերականգնում համագործակցությունը Ներսես Ա-ի հետ, սակայն ստեղծված ծանր տնտեսական պայմաններում այլևս հնարավոր չէր շարունակել կաթողիկոսի լայնամասշտաբ ծրագրի իրագործումը: Ուստի, երկրի ողջ ռեսուրսները ներդրվում են ստեղծված իրավիճակը շտկող առաջնային պայմանների վերականգնման համար:

Ներսես Մեծի մահվամբ նրա ծրագիրը մնում է այդպես էլ ամբողջապես չիրագործված: Սասանյանների օրինակով հոգևոր և աշխարհիկ իշխանությունների սերտ համագործակցությամբ կենտրոնական իշխանությամբ երկրի հզորացման Արշակ Բ-ի և Ներսես Ա-ի ջանքերը իրենց սպասված արդյունքը չեն ունենում: Դրա պատճառը հանդիսանում է երկկողմանի արտաքին զգալի միջամտությունը և սկզբնական նպատակադրումին հակառակ ներքին հակասությունների սրումը: Ծրագրի ձախողման պատճառներից մեկն էլ Հռոմեական կայսրությունում վարից վեր ձևավորված քրիստոնեական համայնքների գործառույթների տեղայնացումն էր Մեծ Հայքում վերից վար տարբերակով, որի դեպքում այդ գործառույթները ոչ թե կատարվում էին ժողովրդի կողմից, այլ մեծ չափով ծանրանում էր պետության ուսերին:

Սակայն, այնուամենայնիվ, նրա ջանքերը ունենում են կարևոր նշանակություն. հայ ժողովրդի մեջ ամրապնդվում և արմատավորվում է քրիստոնեությունը, ինչը դիմագրավում է Պարսկաստանի ասիմիլացիոն քաղաքականությունը, սկսվում է քրիստոնեության ազգայնացման գործընթացը, ինչը պետք է ժողովրդին հետ պահեր հռոմեական ազդեցությունից: Ներսեսի գործը շարունակում են որդին ու իր աշակերտները, Մեսրոպ Մաշտոցը, որոնք հայ նոր դպրության ստեղծմամբ ու տարածմամբ, հակառակ տնտեսական ու քաղաքական ծանր պայմանների, մշակութային վերազարթոնքի հիմք են հանդիսանում և ազգին ապահովում հետագա նվաճումների բովում սեփական դիմագիծը պահպանելու հզոր գործիքներով: Հայ ժողովրդին քրիստոնյա դարձնելու ընթացքը կարելի է բաժանել չորս հիմնական մասերի՝ առաքելական շրջանի քարոզչություն, Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեությունը պետական կրոնի հռչակում, Ներսես Մեծի կողմից հայ ժողովրդի լայն զանգվածերում քրիստոնեության արմատավում և Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի միջոցով քրիստոնեական կրոնի ազգայնացում: Այսպիսով, թեպետ ծրագիրն ի վերջո ձախողվեց ներքին և արտաքին հանգամանքների պատճառով, սակայն ծրագիրն ունեցավ դրական դերակատարում և թողեց իր հիշողությունը հետագա դարերի համար՝ իբրև քրիստոնեական բարեպաշտությամբ երկիրը վերաշինելու դասական օրինակ:

Айкарам Акопян, План Нерсеса Великого по превращению народа Великой Армении в единую духовную общину- В статье предпринята попытка изучить возникновение плана армянского католикоса Нерсеса I относительно превращения Великой Армении в великое объединенное духовное сообщество в свете конфликта между центробежными и центростремительными силами и в свете борьбы Римской империи и Сасанидской Персии. План Нерсеса I был важной частью великой перспективы того, что великий армянский король Аршак II станет центральной властью сильного и независимого королевства.

В работе изложены проблемы, которые план должна был решить, а также шаги по его реализации. Опыт решения проблем, с которыми сталкиваются люди, образованные Римской империей и ветхозаветными законами и религией в Римской империи, и его применение в Великой Армении. Причины провала проекта и большое положительное влияние усилий проекта на жизнь армянского народа изучаются.

Haykaram Hakobyan, The plan of Nerses the Great to transform the people of Greater Armenia into one spiritual community- The article attempts to study origins of the plan to turn the people of Greater Armenia into a great, united, spiritual community in the light of the conflict between the centrifugal and central forces of the Greater Armenia and in the light of the struggle of the Roman Empire and Sassanian Persia. Nersei's plan was an important part of the great prospect of the great Armenian King Arshak II of Armenia becoming the central authority of a strong and independent kingdom.

The work outlines the problems that the plan was intended to solve, as well as the steps for its implementation. Examples are revealed for the plan of spiritual communities formed within the Roman Empire and Old Testament law and experience of solving people's problems and their application in Greater Armenia. The reasons for the failure of the plan and the positive impact of the efforts to implement the plan on the Armenian people are being examined.